Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

459

8
3ш-26

19 MAY 2005
№ 2370
10 NOV 2011
3ա-26
1002 / 6319

ԵԱՊՈՆԱԿԱՆ

ՌՈՄԷՕ ԵՒ ՋՈՒԼԻԵՏԱ

Իրական պատմութիւն մի պատանու և մի աղջկայ մասին թէ ինչպէս նրանք վատ ապրեցին և լաւ մեռան, իսկական եղելութիւն, որ պատահել է մի անգամ՝ բայց կապ ունի մի քանի ճշմարտութիւնների հետ, որոնք յաւիտենական են։

Թարգմ. ՎԱՀԱՆ ՓԱՄԲՈՒԽՉԵԱՆ

ԹԻՖԼԻԶ
Տպարան Մ. Վարդանեանցի Գանովսկի փող. № 3
1906

09.07.2013

459

10

Дозволено цензурою Тифлисъ, 20-го февраля 1906 г.

Ա.

ԻՆՉ Է ՓՈՂԸ

Փողը աղքատների ստացուածքն է։

Նա, որի սրտում, ինչպէս ոսկի, հնչում է սիրոյ երգը, որի աչքերից, ինչպէս գոհար, թափւում է հիացմունքի արցունք, ով ազնիւ գործի համար թափում է իր արիւնը՝—առանց փողի էլ հարուստ է։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Ապրում էր մի սամուրայ։

Ապրեց ու մեռաւ։

Որովհետև նրանից յետոյ մնաց մէկ որդի՝ և չափազանց շատ հարստութիւն՝ ուստի, ի հարկէ, բազմաթիւ մարդիկ նրան ազգական դուրս եկան։

Ամբողջ երկիրը հանդուցեալ սամուրայի հետ ազգական երևաց։ Ամեն տեղից գալիս էին ազգականներ, բոլոր քաղաքներից։ Մէկը ազգական էր հօր կողմից, միւսը՝ մօր, երրորդը՝ պապերի, չորրորդը՝ նախահայրերի կողմից։

Եւ նրանք ամենքը սկսեցին հոգս քաշել

Շիրայի-Գոմպաչչիի վրայ, այսպէս էր կոչւում հանգուցեալ սամուրայի մանկահասակ որդին։

Երբ Շիրայի-Գոմպաչչու 18 տարին լրացաւ՝ նրան ոչինչ չմնաց։ Ո՛չ փող, ո՛չ կայք։

Ազգական-խնամակալները տուին նրան իր հօր դաշոյնը և պատմեցին նրա պատմութիւնը.

—Քո նախնիքների տան սերունդներ պահել են դրա բերանը մաքուր ու պայծառ։ Աշխատիր, որ քո ձեռքում չժանգոտուի ամօթից։ Գնա և երջանիկ եղիր։

—Իսկ հօրից յետոյ մնացած ստացուածքը, հարցրեց Շիրայի-Գոմպաչչին։

—Դու ունես մի այնպիսի ստացուածք,—պատասխանեցին ազգական-խնամակալները,—որի համար մեզանից իւրաքանչիւրը կտար իր բոլոր փողերը, բայց որը գնել,—աւաղ,—անհնարին է։ Քո 18 տարիները։ Բաղդաւոր եղիր, որ նրանք քիչ են։ Դու երիտասարդ ես,—գնա և աշխատիր գործածել երիտասարդութիւնդ որքան կարելի է լաւ։

Շիրայի-Գոմպաչչին դաշոյնը տեղաւորեց իր լայն գօտում և գնաց Եդդօ, յոյս ունենալով այնտեղի թագաւորի պալատում գերազանցել զէնք շարժել գիտենալու մէջ ուրիշ նշանաւոր պատանիներին և դրանով գրաւել դէպի ինքը բարի տրամադրութիւն, հովանաւորութիւն և հարուստ կին։

Նա միայն ասաց իր խնամակալ-ազգականներից դլխաւորին.

—Հին սովորութեան համաձայն, ուղեկցիր ինձ մինչև մեր քաղաքի սահմանագիծը և, ցոյց տալով ինձ, պատանուս, ամբողջ աշխարհի վրայ,

ասա. «Այդ բոլորը քոնն է, եթէ կկարողանաս նրան տիրել»։

Խնամակալը համաձայնուեց։

—Միայն թէ ինձանից փող չխնդրես ճանապարհի համար։

—Լաւ,—կարճ պատասխանեց Շիրայի-Գոմպաչչին։

Երբ նրանք դուրս եկան քաղաքի սահմանները՝ խնամակալը, ժպտալով, ցոյց տուաւ ձեռքով չորս կողմը.

—Ահա, պատանի։ Ամբողջ աշխարհը քո առաջն է։ Վերցրու նրանից, որքան կկարողանաս։

Շիրայի-Գոմպաչչին պատասխանեց գլուխ տալով.

—Ես այդպէս էլ կանեմ։ Սկզբի համար ինձ հարկաւոր է քո զգուելի կեանքը, կողոպտիչ, որ յափշտակել ես այն բոլորը, ինչ որ հայրս հաւաքել է։

Եւ այս խօսքերով դուրս քաշեց գօտուց սամուրայ—նախնիքների դաշոյնը։

Խնամակալը ծնկների վրայ ընկաւ։

—Մի սպանիր ինձ։ Վերցրու, ինչ ուզում ես, թող ինձ միայն մի բան՝ կեանքս։

Շիրայի-Գոմպաչչին պատասխանեց.

—Ո՛չ, ես ուզում եմ նայել, թէ ինչպէս կկաթկաթէ արիւնը դաշոյնիս բերանից։ Ես կը թրջեմ նրան առաջին անգամ ազնիւ արեան մէջ,—չէ՞ որ դու հաստատում ես, որ, իբրև թէ, ազգական ես իմ հօրը, մի ազնիւ սամուրայի, որ երբէք չէ արատաւորել իրան որևէ խայտառակ արարքով։

Ու այս խօսքերով խրեց դաշոյնի ծայրը

խնամակալի կոկորդը և բռնեց այդպէս, մինչև որ պողպատը տաքացաւ։

—Դու զարթնեցիր և կենդանացար, ազնիւ պողպատ,—բացականչեց Շիրայի-Գոմպաչչին,—խոստանում եմ քեզ, որ դու երբէք չես քնի իմ ձեռքում։

Եւ արագութեամբ առաջ անցաւ, որպէսզի խոյս տայ հալածանքից ու վրէժխնդրութիւնից։

Բ.

Ի՞ՆՉ Է ԴԱՇՈՑՆԸ

Ով ունի դաշոյն՝ նա ունի այն բոլորը, ինչ որ կայ ուրիշների մօտ։

Ով ունի ոսկի՝ նա ունի միայն այն, ինչ որ կայ իւր մօտ։

Ով ունի դաշոյն՝—մի հարուած՝ և նա կունենայ այնքան, որքան կայ ուրիշի գրպանում։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Ճանապարհին Շիրայի-Գոմպաչչին հանդիպեց մի քանի մարդկանց, որոնք պատրաստուել էին գիշերելու հէնց այնտեղ, որտեղ վրայ էր հասել գիշերը՝—դաշտի մէջ։

Նրանց գեղեցիկ շորերից և լաւ զէնքերից Շիրայի-Գոմպաչչին նրանց նշանաւոր ու հարուստ մարդկանց տեղ ընդունեց։

Նրանց մէջ արտակարգ գեղեցկութեան տէր մի դեռահաս աղջիկ կար, որը նստել լաց էր լինում։

Բարևելով ամենքին և սիրով ընդունուելով, Շիրայի-Գոմպաչչին հարցրեց.

—Ինչո՞ւ են ցօղով պատած այդ ծաղկի թերթիկները։

—Այս ջահել աղջիկը կորցրել է հօրը,—պատասխանեց ուղևորներից հասակաւորը,—և այժմ լալիս է նրա վրայ։

Եւ Շիրայի-Գոմպաչչու հայեացքից չվրիպեց, թէ ծերուկը ինչ խիստ տեսքով նայեց երիտասարդ աղջկան։

—Դէ պատասխանիր անծանօթին։

Աղջիկը վախեցած նայեց ծերուկին և միայն գլուխը շարժեց ի նշան համաձայնութեան։

Խօսել չկարողացաւ. արցունքները խեղդում էին նրան։

«Այստեղ մի բան կարգին չէ»—մտածեց Շիրայի Գոմպաչչին, նստելով, ամենքի խնդրելովը, ընթրիքի։

—Ազնիւ տեսքովդ դու նշանաւոր պատանի ես լինելու,—ասաց նրան ծերունին,—երևի, բեռնակիրներդ քեզանից յետ են մնացել, իսկ դու, պատանեկական անհամբերութեամբ, առաջ ես անցել։

—Ես ոտով եմ գնում,—պատասխանեց Շիրայի Գոմպաչչին,—և չունեմ բեռնակիրներ։

—Ուրեմն, նշանակում է, ստացուածքդ առաջ ես ուղարկել։ Հօ չէ՞ կարող նշանաւոր ծագում ունեցող պատանին,—իսկ դու այդպէս ես ըստ երևութին,—ճանապարհորդել առանց ստացուածքի։

—Ահա իմ բոլոր ունեցածը,—ասաց Շիրայի

Գոմպաչչին, ցոյց տալով գոտու միջից դաշոյնը։

—Շատ չէ,—ժպտաց ծերունին։

Շիրայի-Գոմպաչչին ցասկոտութեամբ պատասխանեց նրան.

—Թաւ անտառին մօտեցաւ կացինով մի մարդ։ Անտառը անանցանելի էր,—սակայն նա աջ ու ձախ սկսեց կոտորել և ճանապարհ բացեց իր համար։ Կեանքը՝ թաւ անտառ է։ Ով ունի կացին՝ նա իր համար կբանայ ճանապարհ։

Ու հանելով իր դաշոյնը և գորովանքով դիտելով՝ պատմեց, թէ քանի նախնիքների է նա ծառայել, քանի կռիւներում է ոռոգուել թշնամիների արիւնով և քանի վեհանձն ինքնասպանութիւնների մէջ փրկել է նախնիքներին խայտառակութիւնից կամ գերութիւնից։

—Այդպիսի ծառայութիւն կմատուցանէ և՛ ինձ,—վերջացրեց Շիրայի-Գոմպաչչին,—դաշոյնով կարելի է գնել ամէն ինչ։ Ես կգնեմ նրանով կամ յարդ ու պատիւ և հարստութիւն, կամ ազնիւ մահ։

—Վճռականութիւնը մեծ ոյժ է, եթէ նրան ղեկավարում է զգուշութիւնը,—ժպտալով ասաց ծերունին և առաջարկեց Շիրայի-Գոմպաչչուն գիշերել իրանց հետ միասին։

Յոգնած փախստից՝ Շիրայի-Գոմպաչչին չթողեց հիւրասէր մարդկանց կրկնելու իրանց հրաւէրը։

Քնից առաջ նա բոլորին ցոյց տուեց իր դաշոյնը և շատ գոհ էր, տեսնելով որ ամէնքի աչքերն էլ վառուեցին թանկագին հին դաշոյնի վրայ։

Հազիւ դիպած գետնին՝ Շիրայի-Գոմպաչչին քնեց, ինչպէս մեռած։

Բայց գիշերուայ մէջ նա արթնացաւ,—մէկը նրան ասում էր.

—Պատանի, վեր կաց ու փախիր։

Դժուարութեամբ նա բաց արեց աչքերը և աստղերի առկայծելուց տեսաւ չքնաղ աղջկան, որին երեկոյեան տեսել էր լաց լինելիս։

—Պատանի, վեր կաց ու փախիր,—ասաց նա, ու նրա ձայնը նման էր ծաղիկների շշուկի, որ վախեցած շշնջում են գիշերով, զգալով ցուրտ առաւօտուայ մօտենալը—փախիր, քանի ուշ չէ։ Ես լսեցի, թէ ինչպէս նրանք վճռեցին՝ վաղ առաւօտեան, մինչ դու քնած կլինես՝ վերցնել քեզանից, քնածիդ, դաշոյնը և հեռանալ։ Իսկ եթէ արթնանաս այդ միջոցին՝ նաև սպանել քեզ, անողէնիդ։

—Կարո՞ղ է այդպիսի բան պատահել,—բացականչեց Շիրայի-Գոմպաչչին, չէ՞ որ նրանք գիտեն, որ դա իմ բոլորը ունեցածն է։

—Երդւում եմ քեզ իմ հօրով, որը երբէք չէ մեռել,—բացականչեց աղջիկը։

Ինչպէս օձից խայթուած՝ Շիրայի-Գոմպաչչին վեր թռաւ գետնից։

—Ո՞րքան ցած են մարդիկ,—բացականչեց նա,—նրանք միայն մտածում են, որ ուրիշի թանկագին բանը խլել։—Այդպէս էլ ես կխլեմ նրանցից այն, ինչ որ թանկ է ամէն բանից։

Եւ մերկացնելով դաշոյնը, նա սարսափելի կատաղութեամբ ընկաւ քնածների վրայ և լայն ասպարէզ բաց արեց իր դաշոյնի համար։

Երկինքն արդէն սկսել էր շառագունել, երբ

բոլորը մեռած էին, և արիւնաներկ Շիրայի-Գոմ-պաչչին ինքն իրան եկաւ կատաղութիւնից յետոյ։

—Ներիր ինձ, հրաշալի ծաղիկ, որի անունը ես չգիտեմ, ասաց նա, դիմելով երիտասարդ աղջկան,—ներիր ինձ, որ սպանեցի ազգականներիդ և քեզ այնքան վիշտ պատճառեցի։

—Ինձ կոչում են Կոմուրասակի,—պատասխանեց նա, կարմրելով, ինչպէս արշալոյսը, որ վառւում էր երկնքում,—և ես ծաղիկ չեմ, այլ միայն ծաղկի կոկոն, որ կբացուի՝ երբ նրան այրէ սիրոյ արեգակը։ Ոչ մի վիշտ դու ինձ չպատճառեցիր,—այլ, ընդհակառակը, ուրախութիւն։ Այս մարդիկը, որոնցից դու ազատեցիր ինձ, աւազակներ են։ Նրանք ինձ յափշտակեցին հօրս տանից, որպէս զի ահագին փրկանք ստանան—իմ հայրը շատ հարուստ է։ Դու տեսնում ես, որ ես չէի ստում, երբ գլխով արի այն խօսքին, թէ հօրս կորցրել եմ։ Վերադարձրու ինձ նրան, որպէսզի նա կարողանայ շնորհակալ լինել քեզանից այնպէս, ինչպէս արժեմ ես, նրա սէրը դէպի ինձ և քո սիրագործութիւնը։

Շիրայի-Գոմպաչչին, վերահաս օրուայ լուսով չդադարելով սքանչանալ Կոմուրասակու վրայ, տարաւ նրան մինչև նրա հօր տունը և ընդունուեց ուրախութեամբ ու պատիւներով։

—Աղջիկս բոլորն ինձ ասել է—յայտնեց Կոմուրասակու հայրը, երբ պատանին պատրաստւում էր աւելի հեռաւոր ուղևորութեան.—և ես գիտեմ, թէ ինչպէս կարող եմ շնորհակալութիւն յայտնել քեզ։ Դու վերադարձրիր ինձ իմ կեանքը, և դրա փոխարէն ես քեզ կտամ իմ ունեցած գանձերից ամենալաւը։ Ես հարուստ

եմ, աղջիկս խոստովանեց, որ սիրել է քեզ հէնց առաջին հայեացքից,—վերցրու նրան կին և կաց մեզ մօտ։

Բայց Շիրայի-Գոմպաչչին պատասխանեց հպարտութեամբ.

—Ես չեմ ուզում, որ հօրս դաշոյնը ժանգոտուի անգործութիւնից ու ամօթից։ Ես գնում եմ ձեռք բերելու փառք ու պատիւ, և թէև ինձ շատ դուր է գալիս աղջիկդ,—սակայն ես գործ չունեմ քո փողերի հետ։ Մնաս բարով։

Ու գնաց։

Գնաց հպարտ, զգալով սակայն, որ կարծես մի բան պակ է գալիս իր սրտից։

Գ.

Ի՞ՆՉ ԵՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ։

Այն մարդը, որ իր թշնամիներին ստիպել է զգուշանալ, և ինքն էլ զգուշանում է իր բարեկամներից,—կարող է իր կեանքը ապահովութեան մէջ համարել։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Իր քաջութեամբ և վեհանձնութեամբ Շիրայի-Գոմպաչչին թագաւորի պալատում միանգամից ձեռք բերեց բազմաթիւ բարեկամներ։

Առանձնապէս նրա հետ բարեկամացաւ մի պալատական, որին թագաւորը շատ յարգում էր և սիրում նրա խելքի և խորամանկութեան պատճառով։

Մի անգամ ուշ երեկոյեան պալատականը մտաւ այն սենեակը, որտեղ քնում էր Շիրայի-Գոմպաչչին, և ասաց նրան.

—Ուզում ես միանգամից ձեռք բերել թագաւորի բարձր տրամադրութիւնը, իսկ դրա հետ միասին նաև փառք ու պատիւ։

—Ես հէնց դրա համար էլ եկել եմ Եդդո,—պատասխանեց Շիրայի-Գոմպաչչին։

—Դէ լսիր,—ասաց պալատականը, ես կարող էի գնալ և իմաց տալ թագաւորին, և միայն ինձ վրայ կթափուէին բոլոր ողորմութիւնները, բայց ես սիրում եմ քեզ և ուզում եմ, որ փառք ու պատիւներն ու պարգևները քեզ էլ հասնեն։ Այսօր գիշերով տասն մերձաւորներ պայմանաւորուել են յափշտակել թագաւորի որդուն, որպէսզի թագաւորին ստիպեն,—դու գիտես, թէ ինչպէս նա սիրում է իր որդուն,—որպէսզի նրան ստիպեն հրաժարուել իշխանութիւնից և յանձնել մի ուրիշի, ով իրանց հաճելի է։ Ես գիտեմ նրանց բոլոր մտադրութիւնը, որովհետև ես ինձ ձևացրի, իբրև թէ համամիտ եմ նրանց բոլոր որոշումներին։ Բայց ես ուժեղ չեմ։ Իմ ոյժը՝ իմ խելքն ու խորամանկութիւնն է։ Իսկ դու քաջ ես և զէնք շարժելու մէջ ամենից ճարտարը։ Գնանք և պահապան կանգնենք թագաւորի որդու ննջարանի դռների մօտ։ Եթէ դու սպանես բոլոր դաւադիրներին՝ մտածիր, ինչպիսի ողորմութիւններ անձրևի պէս կթափուեն քեզ վրայ։

Շիրայի-Գոմպաչչին տեղից վեր թռաւ.—Ինքը բաղդն է կամենում ինձ վարձատրել այն բոլորի փոխարէն, որ ես կրել եմ։ Գնանք։

Պալատականը դաշոյնը նրան յանձնեց։

Դեռ ոչ մի անգամ դաշոյնը Շիրայի-Գոմպաչչուն այդպէս թեթև չէր երևացել։

Գնացին և կանգնեցին պահապանութեան։

Ճիշտ կէս գիշերին յայտնուեցին դաւադիրները։

—Կանգնեցէք, դաւաճաններ,—գոչեց, դուրս գալով մթութիւնից, Շիրայի-Գոմպաչչին և մխեց դաշոյնը մինչև կոթը առաջին պատահածի կուրծքը։

Երբ տասներորդը թաւալուեց նրա ոտքերի տակ,—նա յանկարծ մէջքում սարսափելի ցաւ զգաց և վայր ընկաւ առանց գիտակցութեան։

Երբ աչքերը բաց արեց՝ շուրջը լոյս էր.—Ջահեր էին վառուում։

Շիրայի-Գոմպաչչին տեսաւ թագաւորին, մօտ վազող շքախմբին և պահապաններին։

Թագաւորի առաջ կանգնել էր իր ընկեր պալատականը և ասում էր.

—Տեղեկանալով, որ այս տասնեմէկ սրիկաները մտածել են մի չար գործ՝ ես մենակ պահապան կանգնեցի։ Ես ուժեղ չեմ, բայց հաւատացած էի, որ դէպի քեզ ունեցած սէրս և անձնուիրութիւնս, հրամայող, ինձ կտան ոչ-մարդկային ոյժեր։ Եւ ես չսխալուեցի։ Ես սպանեցի տասին,—նրանք սրիկայ էին, բայց գոնէ քաջ սրիկայ, տես, ամենքը վիրաւորուած են կրծքից։ Այն ժամանակ տասնեմէկերորդը, որպէս մի վախկոտ, դիմեց արհամարհելի փախստի։ Նա արժանի չէր ազնիւ դաշոյնի հարուածին։ Թրի հարուածը հասաւ մէջքին և գլորեց նրան։ Եւ այդ մարդը, այդ վախկոտը—ո՞վ էր եղել։ Ո՞վ։ Իմ լաւագոյն բարեկամս։ Որին ես սիրում էի, ինչպէս հարազատ եղբօր։

—Սրիկան ստում է,—բացականչեց Շիրայի-Գոմպաչչին,—ես եմ սպանել դաւադիրներին։ Նայիր, ում դաշոյնն է արեան մէջ։

—Դաւաճանութեան, վախկոտութեան, փախստեան դու աւելացնում ես դեռ սուտն ու զրպարտութիւնը,—զզուանքով բացականչեց թագաւորը,—մենք տեսնում ենք, թէ ում դաշոյնն է արիւնոտ. քոնը փայլում է, ինչպէս ապակի, մի բան, որ չէ կարելի ասել խղճիդ մասին։

Շիրայի-Գոմպաչչին միայն հեկեկաց.

—Ո՛րքան ցած են մարդիկ։

—Այն, որ դու ինձ համար մահացու վիրաւորել ես բարեկամիդ, միայն բարձրացնում է քեզ իմ աչքում, վկայում է քո անձնուիրութիւնը դէպի ինձ,—դիմեց թագաւորը պալատականին։

Վերջինս խոնարհութեամբ գլուխ տուեց.

—Ամենից սիրելի բարեկամիս։ Ես պէտք է մեղքս խոստովանեմ քո առաջ, հրամայող։ Սէրը՝ ծաղիկ է պատանու սրտում,—նրան կարելի է պոկել։ Սէրը ծառ է հասուն տղամարդու սրտում։ Նա պինդ պահւում է արմատներով։ Եւ դուրս հանել սէրը կարելի է, եթէ հանենք սիրտն էլ։ Որքան էլ ոճրագործ է Շիրայի-Գոմպաչչին, սակայն ես այնուամենայնիւ շարունակում եմ սիրել նրան և գթալ։ Թոյլ տուր ինձ ցոյց տալ իմ անձնուիրութիւնը դէպի քեզ։ Պոկիր սիրտս։ Թող իմ սիրելի լաւագոյն բարեկամիս տանջեն աչքերիս առաջ։ Ուզում ես, արա՛ ինձ նրա դահիճը։ Ես ինքս, իմ ձեռքերով կչարչարեմ նրան ամենազարհուրելի տանջանքներով։ Այսպէս եմ ես քեզ նուիրուած, այսպէս եմ պատրաստ վարուելու քո ամեն մի թշնամու հետ, թէպէտ և նա իմ

եղբայրը լինի։ Ես քեզ զոհ բերի իմ ամենալաւ բարեկամիս, թոյլ տուր զոհելու եւ սիրտս։

Թագաւորը զգածուած էր։

—Ո՛չ,—ասաց նա, այնպիսի սիրտը, ինչպիսին քոնն է, հարկաւոր է ինձ։ Ես բաւականաչափ հաւատում եմ քո անձնուիրութեանը։ Ես չեմ ուզում քեզ ենթարկել նոր տանջանքների։ Թող չարագործն ապրի, ես նրան նոյնիսկ անպատիժ եմ թողնում, որովհետև քո բարեկամն է։ Դուրս գցեցէք սրիկային իմ պալատից, թող սատակի վէրքերից որևէ աղբանոցում։ Ջախջախուած իժը անվտանգ է։

—Մի ողորմութիւն, թագաւոր,—հեծեծեց Շիրայի-Գոմպաչչին,—հրամայիր յետ տալ դաշոյնս, սամուրայ նախնիքներիս դաշոյնը։ Ես յոյս ունեմ երբևիցէ մերկացնել այն քո թշնամիների դէմ և ապացուցանել քեզ իմ ուղղամտութիւնը։ Օ՜, արա՛ այս բանը թէկուզ որպէս ողորմութիւն նրան, որին դու համարում ես իմ բարեկամը, իսկ ես՝ թշնամի և մատնիչ։

Թագաւորն ասաց.

—Յետ տուէք նրան իր դաշոյնը։ Փառք ու պարծանք աստուածներին, որ սրիկան չէ արատաւորել նրան բարեկամի արիւնով։

Շիրայի-Գոմպաչչու գօտում խրեցին դաշոյնը և, վիրաւորին, դուրս գցեցին պալատից։

Իսկ խորամանկ պալատականի վրայ պատիւ ու հարստութիւն թափուեցին։ Թագաւորը նրան իրանից յետոյ երկրորդը կարգեց։ Մեծերը շատ քիչ անգամ են տեսնում ճշմարտութիւնը։ Նրանք չափազանց բարձր են, իսկ ճշմարտութիւնը, ինչ-

պէս մրջիւն, վազվզում է նրանց ոտների տակ։ Մի անզգոյշ քայլ՝ և նա ճզմուեց։

Դ

ԻՇ՞ՆՉ Է ՊԱՏԻՒԸ։

Որդին ասաց հօրը.

—Դու ինձ կեանք տուիր։ Ես վերցրի քեզանից անուն։ Իմ կեանքը ես պարտաւոր եմ տալ, որպէսզի քո անունը մնայ նոյնպիսի ազնիւ, ինչպէս որ էր։

Սա բարի որդու խօսքեր են։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Երիտասարդութիւնը՝ բոլոր հիւանդութիւնների ամենալաւ դեղն է,—և Շիրայլի-Գոմպաչչին առողջացաւ դաւաճանողի վէրքից։

Հիւանդ և ուժասպառ՝ նա թափառում էր, քաղցած, Եգդօյի փողոցներով։

Եւ ամենքը խուսափում էին նրանից։

—Ահա այն մարդը, որին Թագաւորը արտաքսել է իր արքունիքից։

Երբ անցնում են ձմերային մրրիկները՝ ծաղկում են գարնանային ծաղիկները։

Երբ պատուի, փառքի, հարստութեան կըրքերն անցնեն՝ սրտում ծաղկում է սէրը։

Այժմ Շիրայլի-Գոմպաչչին գառնութեամբ մտածում էր.

—Ինչու այն ժամանակ ես չմնացի բարի բնատի մօտ և չամուսնացայ գեղեցկուհի Կո-

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1002
6312

մուրասակու հետ։ Ես հիմայ կլինէի [illegible], հանգիստ և երջանիկ,—որովհետև իսկական երջանկութիւնը միայն սիրոյ մէջ է։ Իսկ այժմ բոլորն ինձ ատում են և արհամարհում։

Այսպէս էր սիրուց հառաչում Շիրայլի-Գոմպաչչին, քաղցած, թափառելով Եգդօյի փողոցներում։

Այսպէս մտածելով՝ նա անցնում էր մի թէյատան առջևից, որ ամենալաւն էր քաղաքում, և լսեց մի կնոջ երգելը։

Ձայնը նրան ծանօթ թուաց։

Շիրայլի-Գոմպաչչին կանգ առաւ և սկսեց լսել։

Լարերը հնչում էին, լալիս էին ու գանգատւում կնոջ մատների տակ։

Իսկ կնոջ ձայնը երգում էր, ինչպէս մի ուրախ երգ։

«Ո՞վ է ամենից գեղեցիկը, խելացին ու խիզախը։

«Նրա անունն է՝ Շիրայլի-Գոմպաչչի։

«Ո՞ւմ շրթունքներն երբէք չեն պղծուել ստով, իսկ դաշոյնը՝ բարեկամի արիւնով։

«Նրա անունն է՝ Շիրայլի-Գոմպաչչի։

«Ո՞վ է, իսկապէս, արժանի սամուրայ կոչման։ Ո՞վ կարող է կրել նախնիքների դաշոյնը արժանապատւութեամբ։ Ո՞ւմ դաշոյնն է ամենից սխրագործը։

«Նրա անունն է՝ Շիրայլի-Գոմպաչչի։

«Ո՞ւմ եմ ես սիրում։ Ո՞ւմ համար եմ ես հալւում։ Ո՞ւմ անունն եմ հաւատում մութ գիշերին մինչև անդուարթ լուսածագը։

«Այդ անունն է՝ Շիրայլի-Գոմպաչչի։

—Ո՞վ է համարձակւում,—բացականչեց Շիրայի Գոմպաչչին,—բարձրաձայն գովաբանել Շիրայի-Գոմպաչչու անունը, երբ նրան, լքուածին, ատում ու արհամարհում է ամբողջ Եդդոն։

Եւ Շիրայի-Գոմպաչչին ներս վազեց թէյատուն։

Ներս վազեց և արձանացաւ։

Պատշգամբում, ճոխօրէն ասեղնագործած բարձի վրայ նստած էր, զարդարուած ծաղիկներով, Կոմուրասակին, էլ աւելի չքնաղ, քան առաջ, արտասւում էր ու երգում։

Տեսնելով նրան՝ Կոմուրասակին ճչաց և դէմքը ծածկեց ձեռներով։

—Դու այստե՞ղ, բացականչեց զարմանքի ու սարսափի մէջ Շիրայի-Գոմպաչչին,—երաժշտուհի և երգչուհի՞ *)։ Դու, նշանաւոր և հարուստ հօր աղջիկը։ Դու, որ կրում ես մի անուն, որ միշտ պատուաւոր է եղել։

Կոմուրասակին յետ քաշեց ձեռները երեսից և պատասխանեց հպարտութեամբ.

—Այդ անունը պատուաւոր էլ մնացել է։ Ո՛չ ոք չի համարձակուի ասել, որ իմ հայրն անպատիւ մարդ է և որևէ մէկին խաբել է։ Եւ այդ արել եմ ես։

Ու նա պատմեց Շիրայի-Գոմպաչչուն ինչ որ իրան պատահել էր միմեանցից բաժանուելուց յետոյ։

*) Մինչ հէյշաները, պարուհիները միայն արախատուհի են և վայելում են յարգանք՝ երաժշտուհիներն ու երգչուհիները թէյատներում ամէն մէկին մատչելի կանայք են։

Դժբախտ պատահարներից նրա հայրը սընանկացել էր։

Երբ ծախում էին նրանց բոլոր ունեցածչունեցածը՝ փողոցում կանգնած էին դեռ մի քանի մարդիկ և անիծում էին նրա հօրը։

—Դու խաբեցիր մեզ։ Դու վերցրիր մեր փողերը և յետ չտուիր մեզ։

Հայրը եկաւ տուն, որը արդէն իրանց չէր պատկանում, և ողբ ու կոծով բացականչեց.

—Ահա ես ամէն ինչ կորցրի։ Կորցնում եմ հիմայ և բարի անունս։ Ի՞նչ մնաց ինձ։ Արհամարհելի կեանքի մնացորդներ և մի անպատուած աղջիկ, որը պիտի կրէ մի արհամարհուած անուն։ Հին սովորոյթը պահանջում է, որ ես ծախէի աղջկանս և վճարէի պարտքերս։ Իսկ ինչպիսի տանջանք կընտրէ իմ աղջիկը. մարմնի՞ տանջանք չսիրած մարդկանց գգուանքներից, թէ՞ հոգեկան տանջանքներ այն գիտակցութիւնից, թէ իր հայրը անպատուած է, անարգուած։

Կոմուրասակին պատասխանեց.

—Հայր, ես ինքնասպանութիւն կգործեմ, եթէ ինձ չծախես և չգնես անունդ բաղդից այնպէս մաքուր, ինչպէս որ նա ընկել է նրա անողորմ ձեռքերը։

Հօր աչքերում արտասուք երևաց.

—Աղջիկս, ես գիտէի, թէ ինչ էի անում, երբ քեզ կեանք էի տալիս։

Եւ դուրս գալով նրա հետ փողոց՝ իրան, որպէս խաբեբայի, անիծողներին. ասաց.

—Մի շտապէք քարկոծել շանը, երբ նա դեռ չէ երևացել։ Դուք տեսնում էք, որքան չքնաղ է

աղջիկս։ Նրա գեղեցկութեամբ ես կվճարեմ իմ պարտքերը։ Ինքն է այդ ուզում։

Ու ամենքը զովեցին աննման դատերը և պատուաւոր վաճառականին, որի համար բարի անունը թանկ է աշխարհի բոլոր բաներից։

Ամբողջ քաղաքը նրանց յարգանքներով յուզաբկաւորեց, ծերունին աղջկանը տարաւ Եդդո, և, որովհետև Կոմուրասակին հրաշալի էր, որպէս քիչ անգամ են հրաշալի լինում ծաղիկները՝ նրա փոխարէն թէյատան տիրուհին վճարեց այնքան, որ պատուաւոր վաճառականը աւելիով վերադարձրեց այն ամենին, ում պարտ էր։

—Ահա թէ ինչու եմ ես այստեղ,—վերջացրեց չքնաղ Կոմուրասակին իր պատմելը,—յարգելի Իջի-Սանի տանը, և ահա թէ ինչու ես կարող եմ հպարտութեամբ կրել հօրս անունը։

Շիրայի-Գոմպաչչին քաշ գցեց գլուխը.

—Իսկ ես,—ասաց նա,—ես չկարողացայ մարդկանց աչքում իմ հօր անունը պահել այնպէս պատուաւոր, ինչպէս որ ստացել էի։

Ե

Ի՞ՆՉ Է ՍԷՐԸ

Մեծ գետը, որ հանդարտ ու դանդաղ հոսում էր հովտի վրայով, հարցրեց լեռնային կատաղի փոքրիկ գետակին.

—Ինչու՞ դու այդպէս կատաղի ես։

Սա պատասխանեց.

—Որովհետև իմ ճանապարհին շատ քար կայ։

Այսպէս է և սէրը։ Նա դառնում է կատաղի, երբ ճանապարհին պատահում է խոչընդոտների։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Այդ միջոցին երևաց յարգելի Իջի-Սանը, թէյատան տիրուհին։

—Ո՞վ է այդ դժգոյն պատանին,—հարցրեց նա։

—Ես կոչւում եմ Շիրայի-Գոմպաչչի,—ամօթով պատասխանեց երիտասարդը։

Իջի-Սանը սիրալիր կերպով ժպտաց։

—Նստիր։ Ես գիտեմ այդ անունը։ Ես այդ միշտ լսում եմ իմ գեղեցկուհու, ծաղկանոցիս ամենալաւ ծաղկի երգերում։

Շիրայի-Գոմպաչչին պատմեց նրան իր հանդիպելը Կոմուրասակու հետ և վերջացրեց իր պատմութիւնը՝ ասելով.

—Կոմուրասակուն տուր ինձ։

Նրան կարեկցութեամբ ականջ դնող յարգելի Իջի-Սանը հարցրեց.

—Բայց ինչ պարտական եմ Կոմուրասակուն քեզ տալու։

Նա ասաց.

—Որովհետև սիրում եմ նրան։

Յարգելի Իջի-Սանը ծիծաղեց.

—Բայց ամբողջ Եդդոն սիրում է Կոմուրասակուն։ Նա առաջին գեղեցկուհին է բոլոր թէյատներում,—և, իսկապէս, աստուածների օրհնութիւնն իջաւ այս թէյատան վրայ, երբ ես այս ծաղիկը տնկեցի իմ օրհնեալ հողի վրայ։ Մենք

աղատում չունենք ամենանշանաւոր և ամենա-
հարուստ մարդկանց ձեռքից։ Ոսկին գետի պէս
հոսում է դէպի իմ թէյատունը։ Բայց ես համա-
ձայն եմ կատարել քո ցանկութիւնը, պատանի։
Վճարիր ինձ այնքան, որքան ես վճարել եմ Կո-
մուրասակու համար. վճարիր էլի այնքան, որ
կարողանամ լիութեան ու առատութեան մէջ վեր-
ջացնել իմ օրերը. վճարիր դարձեալ այնքան, որ
որդիքս կարողանան հասնել այն փառք ու պա-
տիւներին, որոնց հարուստներն աւելի հեշտ են
հասնում, քան աղքատները. վճարիր դեռ էլի
այնքան, որ աղջիկներս կարողանան իրանց ա-
մուսիններին հարուստ օժիտ տանել և դրանով
գրաւել նրանց սէրը՝—և այն ժամանակ Կոմու-
րասակին քոնն է։ Քաղիր այդ ծաղիկը ու տար
քեզ հետ։

Շիրայի-Գոմպաչչին չգիտէր ինչ անելիքը։
Նա տեսաւ, որ յարգելի Իջի-Սանը շատ իրա-
ւացի է։

—Ես չունեմ այդքան փող,—բացականչեց
նա դառնութեամբ։

—Այն ժամանակ ուրիշների ճանապարհին
մի կանգնիր,—ասաց Իջի-Սանը,—այնպիսի գե-
ղեցկուհիներ, ինչպիսին է Կոմուրասակին, ուշ-
ուշ են ծնւում։ Դա մի տօն է ամբողջ Եդոյի
համար։ Դուն էլ մասնակցիր այդ տօնին։ Ձեռք
բեր փող և արի այստեղ, որպէս զի լցնես իմ
քսակը ոսկով, իսկ Կոմուրասակու կուրծքը՝ հը-
ճուանքի արցունքներով։ Իսկ մինչ այդ հեռացիր։
Եւ հեռացիր շուտով. Կոմուրասակին այսօր պէտք
է հանդուէ որքան կարելի է լաւ և պէտք է սո-
վորականից աւելի գեղեցիկ լինի—մենք սպա-

սում ենք ճաշին ամբողջ Եդոյի ամենանշանա-
ւոր և հարուստ մարդուն։

Եւ նա արտասանեց Շիրայի-Գոմպաչչուն
մատնող խորամանկ պալատականի անունը։

Պատանին միայն կրճատացրեց ատամները և
գնաց։

Կատաղութեան մէջ նա թափառում էր քա-
ղաքում։ Այժմ միայն մէկ մտածմունք ունէր։

—Ինչ ճանապարհով ուզում է լինի՝ փող
ճարել և գնել Կոմուրասակու գգուանքները։

Երբէք նա չէր երևացել նրան աւելի գեղե-
ցիկ, աւելի չքնաղ։

Այսպէս մտածելով՝ նա յիշեց իր դաշոյնը.

—Կծախեմ և կգնեմ Կոմուրասակուն գրկե-
լու երջանկութիւնը։

Այս սարսափելի մտքով նա բարձրացրեց
վշտից քաշ ընկած գլուխը և նոյն րոպէին տե-
սաւ պալատականին, որ գնում էր թէյատուն
ճաշի և ժպտում էր, մտածելով, հաւանօրէն,
Կոմուրասակու մասին։

Շիրայի-Գոմպաչչու արիւնը գլուխը խփեց,
երբ տեսաւ այն մարդուն, որը, խլելով նրանից
ամեն ինչ, այժմ էլ խլում էր Կոմուրասակու
գգուանքները։

Նա շուրջը նայեց։

Դատարկ փողոցում միայն իրանք էին։

Շիրայի-Գոմպաչչին մօտ գնաց և ձեռքը
դրեց մտքովը տարուած և ժպտացող պալա-
տականի ուսին։

Պալատականը ցնցուեց, բարձրացրեց գլու-
խը և դեղնեց, երբ տեսաւ իր առջև իր մատնած
դաւաճանած մարդուն։

—Ինձանից պէտք էր առաջ վախենալ,—ժպտալով ասաց Շիրայի-Գոմպաչչին,—վախենալ և չհանդիպել իմ ճանապարհին։ Այժմ ուշ է. մենք արդէն հանդիպեցինք։ Ինչու՞ ես դեղնում. մի ակնթարթից մահը կստիպէ քեզ դեղնել։

—Մի՛ սպանիր ինձ,—կոչեց պալատականը։

—Ես կանեմ այն, ինչ որ խոստացել եմ Թագաւորին,—ասաց Շիրայի-Գոմպաչչին,—ես կապացուցանեմ նրան իմ անձնուիրութիւնը նը-բանով, որ կսպանեմ դաշոյնով այն ամենամեծ սրիկային, որ եղել է երբևիցէ նրա տիրապետու-թեան մէջ։ Ես ողջոյն բերի քեզ այն գեղեցկու-հուց, որին դու գիտես։ Ո՞րտեղ։ Ա՞յստեղ։ Ա՞յս կրծքին պէտք է այսօր թեքէր իր գլուխը Կո-մուրասակին։ Ո՞րտեղ։ Ա՞յստեղ դնել։ Սրտիդ մօտ։ Հա՛։ Ահա՛ այստեղ։

Եւ Շիրայի-Գոմպաչչին մխեց դաշոյնը պա-լատականի սիրտը։

Վերջինս մեռաւ, չկարողանալով նոյն իսկ մի հառաչ արձակել։

Շիրայի-Գոմպաչչին զգուանքով ձգեց նրա դիակը հէնց այնտեղ փողոցում և, խուզարկելով նրան, վերցրեց պալատականի մօտ գտնուած բոլոր փողերը և դիմեց յարգելի Իջի-Սանի թէ-յատունը։

—Ուրախացրու Կոմուրասակուն։ Այսօր մենք, վերջապէս, միմեանց կգգուենք,—բաց-կանչեց Շիրայի-Գոմպաչչին,—և այդ բոլորը շնորհիւ իմ բարեկամ պալատականի։ Նա քեզ-նից բարի է, յարգելի Իջի-Սան։ Իմանալով, որ ես սիրում եմ Կոմուրասակուն, նա տուեց ինձ իր քսակը, որպէս զի ես կարողանամ գալ քո թէ-

յատունը։ Այդ դեռ քիչ է։ Նա ինձ խօսք տուեց, որ այլևս երբէք չի գայ Կոմուրասակու մօտ։ Եւ թէև նա չափազանց նենգ ու խորամանկ պալատա-կանի հռչակ է վայելում, սակայն ես վստահ եմ, որ այս անգամ նա կպահէ իր խօսքը։

—Բարի մարդ շատ կայ աշխարհում,—ա-սաց յարգելի Իջի-Սանը,—մանաւանդ հարուստ-ների մէջ։ Ճաշը պատրաստ է, և պէտք չէ ժա-մանակ կորցնես ինձ հետ խօսքի բռնուելով։

Շիրայի-Գոմպաչչին ճաշի նստեց Կոմուրա-սակու հետ, որը, ճոխօրէն հագնուած՝ սովորա-կանից էլ աւելի չքնաղ էր այդ օրը։

—Նստի՛ր կողքիս։ Ես չեմ ուզում, որ դու ինձ ծառայես։ Թող մեզ ուրիշները ծառայեն,—ասաց նրան Շիրայի-Գոմպաչչին,—նստի՛ր ինձ հետ միասին, կողքիս, ինչպէս այդ պատահում է տղամարդու և կնոջ կեանքում միայն մի անգամ, նրանց հարսանիքին։

Հէյշաները պարում էին։ Երաժիշտներն ու երգչուհիները փառաբանում էին նրանց երիտա-սարդութիւնը, գեղեցկութիւնն ու սէրը։

Իսկ Շիրայի-Գոմպաչչին ու Կոմուրասակին նստել էին միմեանց կողքի, ինչպէս հարս ու փեսայ։

Իջի-Սանի այդու լաւագոյն ծաղիկը դրժ-գոյն էր։

Կոմուրասակին նկատեց Շիրայի Գոմպաչ-չու ձեռքերի վրայ արեան հետքեր ու շշուկով հարցրեց.

—Այդ ի՞նչ է։ Ես վախենում եմ։

—Լո՛ւռ,—նոյնպէս շշուկով պատասխանեց Շիրայի-Գոմպաչչին,—դա մի քանի կաթիլ է այն

առուակից, որի մէջ ես լուացել եմ ոսկիս։

Ու խնջոյք էր անում։

Երբ երեկոյեան աղջամուղջը ամեն ինչ լցրեց մայր մտնող արևի վերջին ճառագայթների վարդագոյն արտացոլումներով՝ — Շիրայի-Գոմպաչչին հրամայեց.

—Հիմայ ամենքդ հեռացէք։ Մենք Կոմուրասակու հետ միմեանց պահ կտանք հառաչներ, որոնք աւելի քաղցր են քան ձեր երգերը։

Ու բոլորը, ծիծաղելով, հեռացան։

—Այժմ դու իմն ես,—ասաց Շիրայի-Գոմպաչչին, բայց այդ միջոցին ներքևում հնչեցին աղմուկ ու աղաղակներ։

Յարգելի Իջի-Սանը սենեակ վազեց ճչալով.

—Մարդասպան։ Դու սպանել ես քաղաքի ամենապատուաւոր մարդուն։

Եւ նրա յետևից մտան Թագաւորի ծառաները.

—Ոճրագործութիւնդ բացուած է,—ասացին նրանք։—Ո՞վ կարող էր սպանել Թագաւորի սիրելուն, ամենապատուաւոր, ամենանշանաւոր և ամենահարուստ մարդուն։ Ո՞վ, բացի այն մարդուց, որի կեանքն է փրկել նա իր բարեկամութեամբ։ Կասկածն իսկոյն և եթ քեզ վրայ ընկաւ։

—Ահա թէ ինչու արիւն կայ ձեռքերիդ,—սարսափի մէջ բացականչեց Կոմուրասակին։

—Այդ կինը բաց է անում արարքդ։

Շիրայի-Գոմպաչչին դուրս քաշեց դաշոյնը, որպէսզի խրէ իր փորը,—բայց Թագաւորի ծառաները կարողացան նրան բռնել և դաշոյնը խլեցին։

—Ո՛չ, դու արժանի չես պատուաւոր մահուան։ Թագաւորի հրամանով դու կգլխատուես, ինչպէս մի ամենասովորական մարդասպան։

Այն ժամանակ Շիրայի-Գոմպաչչին յուսահատութեան մէջ գոչեց.

—Լսեցէք, մարդիկ հէնց միայն այն են ասել, որ խլել են ինձանից այն բոլորը, ինչ որ պատկանում էր ինձ։ Խլեցին կարողութիւնս, պատիւս, բարի անունս, Թագաւորի տրամադրութիւնը, նրան մատուցած ծառայութիւններս, սիրածս կնոջ, վերջապէս, նախնիքներիս դաշոյնը, նոյնիսկ պատուով ու փառքով մեռնելու հնարաւորութիւնը։ Գոնէ մի գիշեր թողէք ինձ։ Այդ գիշերը ես կանցկացնեմ Կոմուրասակու հետ, իսկ առաւօտեան արէք ինձ, ինչ որ ձեզ արդար կթուայ։ Աւելացրէք դրա համար մի նոր տանջանք։

Բայց նրան պատասխանեցին.

—Թագաւորի կամքը սրբազան է։ Ո՛չ մի բոպէ յետաձգում։ Դու կգլխատուես այսօր և եթ հէնց այնտեղ, որտեղ կատարել ես քո ամենալաւ բարեկամի ստոր սպանութիւնը։

Լիրայի-Գոմպաչչուն տարան այն փողոցը, որտեղ նա սպանել էր խորամանկ պալատականին, և կտրեցին նրա գլուխը, ինչպէս մի ամենասովորական ոճրագործի։

——

Զ

ԻՆՉ Է ՄԱՀԸ

—Ի՞նչ կանէիր, եթէ ես կամենայի քեզ վրայ թափել բոլոր դժբաղդութիւնները,—հպարտութեամբ հարցրեց բաղդը մարդուն։

—Ես կմեռնէի,—ոչ-պակաս հպարտութեամբ պատասխանեց մարդը բաղդին,—և դու անզօր կլինէիր ինձ վրայ։

Ամէն բանից կարելի է զրկել մարդուն, բացի մեռնելու կարելիութիւնից, երբ նա կամենայ։

Այսպէս կասէր իմաստունը, եթէ լինէր մեր մէջ։

—

Շիրայի-Գոմպաչչին ունէր մի բարեկամ, որը սիրում էր նրա խիզախութիւնն ու ղէնք շարժել գիտենալը։

Սամուրայ էր, ինչպէս և նա։

Նա ասաց.

— Նա վատ ապրեց։ Բայց նա սամուրայ էր։ Նա պէտք է սամուրայի պէս էլ թաղուի։

Գնաց թագաւորի մօտ և մեծ փողով գնեց գլխատուած Շիրայի-Գոմպաչչու մարմինը։

—Թաղիր հեռու տեղ, որտեղ ուզում ես,—ասաց թագաւորը, ստանալով փողերը,—միայն թէ Եդոյի սահմաններից դուրս։

Հանգուցեալի բարեկամը տարաւ Շիրայի-Գոմպաչչու մարմինը Մեգուրո և թաղեց այնտեղ

այն բոլոր պատիւներով, որ պատշաճ են սամուրային։

Գարուն էր։

Իմանալով Շիրայի-Գոմպաչչու թաղումը՝ Կոմուրասակին քաղեց կեռասենու ծաղիկ ոստեր և եկաւ նրա բարեկամի մօտ.

—Ցոյց տուր ինձ, որտեղ ես հողին յանձնել Շիրայի-Գոմպաչչու մարմինը։ Ես մի կին եմ, որ սիրում էր նրան և որին սիրում էր նա։ Ես ուզում եմ զարդարել նրա գերեզմանը այնպէս, ինչպէս որ նա արժանի էր։

Հանգուցեալի բարեկամը, տեսնելով իր առջև Կոմուրասակուն, արհամարհանքով բացականչեց.

—Ուրեմն դո՞ւ ես այն դժբաղդը, որի համար նա մոռացաւ իր պատիւը, սպանեց ու կողոպտեց մի պատուաւոր մարդու, որին պարտական էր իր կեանքը։ Այդ դո՞ւ ստիպեցիր նրան մոռանալ իր պատիւն ու խիղճը։

Կոմուրասակին, արտասուելով, պատասխանեց.

—Այո՛, այդ ես եմ։ Միայն թէ ցոյց տուր ինձ նրա գերեզմանը։

Նա հրաշալի էր, և հանգուցեալ Շիրայի-Գոմպաչչու բարեկամը ասաց նրան.

—Լաւ։ Թող քո ասածի համեմատ լինի։ Բայց քեզ նման կանայք ձրի ոչինչ չեն անում։ Ե՛ս էլ չեմ ուզում ոչ մի բան ձրի անել քեզ նման կնոջ համար։ Ես քեզ ցոյց կտամ իմ անբաղդ բարեկամի գերեզմանը, բայց դրա համար դու նախ պիտի իմը լինես։ Ես չեմ ուզում, որ բարեկամիս հողին, յանցաւոր, բայց տանջուող,

գերեզմանի մօտ քեզ մաքուր տեսնէ։ Թող նա քեզ վաճառուած տեսնէ։ Կտեսնէ և զզուանքով երեսը կշրջէ քեզանից։

Կոմուրասակին արցունքներով պատասխանեց.

—Ես քոնն եմ, երբ դու այդ կամենաս։

Հանդուցեալի բարեկամն ասաց.

—Ես ուզում եմ, որ այդ իսկոյն լինէր։ Ես ուզում եմ, որ դու լինես այնպէս, ինչպէս որ ես։ Նոյնիսկ այն ժամանակ, երբ գնում ես քեզ համար կեանքը զոհած մարդու շիրմին այցելութեան՝ դու ընդունակ ես ուրիշին պատկանել։

Կոմուրասակին պատասխանեց.

—Լաւ։ Մարմինս այնքան են տանջել, որ մի աւելորդ տանջանք ոչինչ չի աւելացնի։ Ես համաձայն եմ, արա ինչ ուզում ես։

Բարեկամը, նախատելով նրան, զզուանքով տարաւ Շիրայի-Գոմպաչչու գերեզմանի մօտ։

—Ահա այն մարդու գերեզմանը, որին դու կորստի ես մատնել։

Կոմուրասակին շիրիմը զարդարեց կեռասենու սպիտակ ծաղիկներով ու ասաց.

—Շիրայի-Գոմպաչչի։ Այն ծաղիկներին՝ որոնցով ես զարդարեցի քո գերեզմանը, աւելացնում եմ դարձեալ մի հատ, որին կոչում են «Եդդոյի լաւագոյն ծաղիկը»։

Ու, հանելով մի դանակ, որ պահուած էր կիմօնոյի մէջ՝ կտրեց կոկորդը և մեռած ընկաւ Շիրայի-Գոմպաչչու գերեզմանի վրայ։

Եւ բարեկամը խոնարհուեց նրա մարմնին

մինչև գետին՝ շանթահարուած սիրոյ և մահուան մեծութեամբ ու վեհութեամբ։

Այդ նա է կանգնեցրել, իբրև իր քաւումը, երկու մահարձան Շիրայի-Գոմպաչչու և Կոմուրասակու շիրիմների վրայ։

Ու այն օրուանից, ամեն գարուն, երբ արեգակը հրաշալի սպիտակ բոլորքով զարդարում է կեռասենու ոստերը՝—Տոկիոյի պատանիներն ու աղջիկները գունդագունդ գալիս են Շիրայի-Գոմպաչչու և Կոմուրասակու գերեզմանները և ձիւնափայլ ծաղիկներով զարդարում են յիշատակը նրանց, որոնք սիրել են և սիրոյ համար կեանքերը վճարել։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б...
7 XI 22
имени А. Мясн...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0438425